

մար ամէն դժուարութեան կուրծք տալ եւ անոնց պաշտպան կանգնել (Փարպ., էջ 135 եւ 179): Վարդան կը համակերպի եւ երբ թշնամիներէն վտանգուած Աղուաններու օգնութեան կը փութայ իր բանակին մէջ կ'առնէ Հմայեակ Դիմաքսեան եւ անոր տոհմէն դեռ ՄՈՒՇ, ԳԱԶՐԻԿ եւ ԹԱԹՈՒԼ, որոնք գուցէ Հմայեակի հետ կապուած են եղբայրութեան կամ որդիութան արիւնով: Դիմաքսեանները աննախնթաց քաջութեամբ կը կուռին, բայց Մուշ պատերազմի վայրին որպիսութեան անտեղեակ, թանձրախոր մօրերու կը հանդիպի եւ զիւրազանական մահով իր մահկանացուն կը կնքէ, իսկ Գաղրիկ կը վերաւորուի: Ահա թէ ինչպէս կը նկարագրէ Պատմագիրը. «Յորս նախագոյն յառաջացեալ ի տեղի մարտին Կամարականն Արշաւիր եւ Մուշ սեպուհն (քիչ մը առաջ զինքը կոչած է «գաւազ սեպուհ»): Դիմաքսեանից, որք յանգիտութենէ տեղեացն զիւրեցան թանձրախոր սաստիկ մօրից, Կամարականն Արշաւիր եւ Մուշ յառաւելապէս զիմեցմանէն երիվարացն անկեալք ի տիղմն հանդերձ երիվարօքն խրէին, անդ կատարեալ պսակէր երանելի սեպուհն Դիմակսեանից ի նիխորականաց» (Փարպ., էջ 204, ուր կայ «Նիխորականաց», զոր սրբագրել կ'առաջարկեմ ի նիխորականաց կամ ի նիխորականաց, հմմտ. նոյն պատերազմի մասին նաեւ Եղիշէ, էջ 140—141 եւ Մովսէս Կաղանկատուացի, Պատմ. Աղուանից, էջ 130):

Գաղրիկ կը բուժուի իր վէրքերէն եւ քիչ վերջ երեք Դիմաքսեաններն ալ Աւարայրի դաշտը կը փութան, միշտ հաւատարիմ ու գործակից Մամիկոնեան Սպարապետին, որ գիտէ զանոնք գնահատել: Պատերազմի ատեն արիարար կը կուռի, բայց ինքն ալ «Իմատունն Հմայեակ», Սպարապետին վիճակակից կ'ըլլայ, իսկ Գաղրիկի անունը մեռած նախարարներու եւ սեպուհներու ցանկին մէջ չենք գտներ, ինչպէս եւ Պարսկաստան գերի տարուան աւագանիին շարքի մէջ, եւ հետեւարար կարելի է խորհիլ թէ Աւարայրի ճակատամարտէն մինչեւ հայ նախարարներու կայանաւորումի ժամանակաշրջանին մէջ մեռած ըլլայ եւ կամ այնպիսի պարագայի մէջ կը գտնուէր որ Պարսիկներուն ֆրասակար չէր կրնար ըլլալ (Փարպ., էջ 22, Եղիշէ, էջ 185, 225): Հմայեակին հետ նոյն պատերազմին մէջ կ'իյնան քսան եւ երկու

այրեր, արդեօք ասոնցմէ մէկը Գաղրիկը չէ՞ (Եղիշէ, էջ 225):

Թաթուլ՝ կայանաւորուած Պարսկաստան կը տարուի ՍԱՏՅ Դիմաքսեանի եւ երկու ընկերի հետ՝ միւս հայ նախարարներու բախտակից (Եղիշէ, էջ 369): Այս շորս Դիմաքսեաններու հետ ապրած կ'ըլլայ նաեւ Ջիկ Դիմաքսեան, որ Շահապիվանի ժողովին մէջ է որ միայն կը յիշուի (Հանդէս Ամսօրեայ, 1949, էջ 79—170, կարեւոր էջ 90): Կը կարծեմ թէ Գաղրիկ եւ Ջիկ անունները պէտք է իրարու միացնել:

Վահան Մամիկոնեանի աջակից ու նիգակակից է նախորդներէն մէկուն շառաւիղ ՈՐԴԻ, որ Սոսրովակերտի քովեր «լաւարալ եւ զքաջութիւն գործոց» ցուցնելով Հազարաւորտի դէմ կը կուռի եւ քաջերու մահովը կ'անմահանայ (Փարպ., էջ 469):

Իսկ Ներսէս կաթողիկոսի գումարած ժողովի կը մասնակցին ՍԱՀԱԿ, ՄՈՒՇԵՂ, ԳՐԻԳՈՐ եւ ՎԱՐԴ Ի Հմայեակ, գուցէ Հմայեակ Դիմաքսեանի սերունդէն (Գիրք Թղթոց, Թիֆլիս 1901, էջ 74):

Բաւական վերջ՝ Սմբատ մարզպանի տան հաւատարիմն ու անոր կամակատարն է ՄԵՀՐՈՒ Դիմաքսեան ինչպէս Սերէոս կը գրէ «Տայ ի ձեռն Միհրուի ուրումն առն երանելոյ, զոր կարգեալ էր ի վերայ տան իւրոյ հաւատարիմ եւ կամակատար, որ է ամեն Դիմակսեանից» (Պատմ., Կ. Պ. 1851, էջ 109): Իսկ անոր քաջ զօրավարներէն է ՍԱՐԳԻՍ Դիմաքսեան, որ Քուչաններու կը յաղթէ (անդ, էջ 104—105): Մինչ անունները լուծած Դիմաքսեաններ Կոստանդին կայսեր կը ներկայանան, երբ անիկա Կարին կ'իջեւանի (անդ, էջ 218):

Սեւ վարագոյր մը Դիմաքսեանները պատմութեան բեմին վրայ մեր աչքերէն կը ծածկէ: Դիմաքսեան մը — արժանի չէր ո՞ր անունը տրուէր եւ այս պատճառով լուծած է կամ աննշան մէկն էր — իր ԱՐՏԱԽԱՉԻ եղբայրը անողորմ Հարիբ գահիճին կը յանձնէ եւ սա «չարաչար մահուամբ» կը մեռցնէ «երանելի այրն», թերեւս 654ին (հմմտ. Սեր., էջ 333):

Ինչպէս այս համառոտ մենագրութենէն կը տեսնուի Դիմաքսեան ազնուական ու նախարարական տոհմը հայ ազգին տուած է հայրենասէր ու ընտիր անձեր՝ աննկատ թով՝

լով եղբայրատեաց անանուն այն մէկ դէմքը, որ սեւ բիծ մըն է այն զարմին գեղեցիկ պատկերին վրայ եւ կամ չուք մը, որ միւսներու դէմքերը աւելի ցայտուն կը ցուցնէ: — Ստուգիւ ցաւալի է որ այսպիսի լաւ գերդաստանի մը անդամներու քիչերուն անունները եւ անոնց կեանքէն քանի մը դրուագներ մեզի հասած են:

Հ. Հ. ՈՍԿԱՆ

ՊԵՏՄՈՒԹԻՒՆ ՀԵՅ ՄՇԸԿՈՒԹԵՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

(Շարունակութիւն:)

3. «ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԳՁԱՆՈՒՄԻ (1919)
Կազմուած է 1919ի սկիզբը: 1919 Ապրիլ 5ին երեկոյթ մը կը կազմակերպէ՝ նոյնանուն Նուագախումբի մը կազմութեան համար: 1920ին կը գործէր «Կոմիտաս» Նուագախումբը¹⁶:

ԱՌՆԱՒՈՒՏԳԻԻԿ (ՔՈՒՐՈՒՉԷՇՄԷՆՊԵՏ)

Առնաւուտգիւղի մէջ Հին Ընկերութիւններու չենք հանդիպած: Քանի մը նոր ընկերութիւններ, որոնց վրայ պիտի խօսինք հոս՝ երեք միացեալ թաղերու — Առնաւուտգիւղ, Քուրուչէշմէ եւ Պեպէֆ — Ընկերութիւններ են:

1. ԱՂԱՍԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1908)
Սուրիանդակ¹⁷ կը ծանուցանէ որ Vaficé թատրոնին մէջ Առնաւուտգիւղի «Աղաւախիւրաց Միութեան» կողմէ ցերեկոյթ մը պիտի տրուի՝ ի նպաստ Ձեյթունի սովեալներուն եւ Քուրուչէշմէի վարժարանին: Հասնօրէն 1908ին կազմուած է Միութիւնս:

2. ՏԻԿԱՆՅ ԿՐԹԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1914)
Հայկուի Արապեան 1914 Ապրիլ 2ին Առնաւուտգիւղէն կը գրէ. «Ատենէ մը ի վեր թաղիս մէջ ալ իրական սեռը գովելի աշխատանքով մը ձեռնարկած է Միութեան մը

կազմութեանը, որ մասնաւորապէս իր հոգածութեան աւարկայ պիտի դարձնէ վարժարանի աղքատ ուսանողները¹⁸»:

Առաջին ժողովքին մասնակցող տասնեակ մը Տիկիներ 20 ոսկի կու տան: Միութեան անդամ եւ հովանաւորող են Տիկիներ. Յակոբեան, Զպլաքեան, Փափագեան, Հալաֆեան, Ատիլ, Պապեան, Նազարեան եւ Ս. Յակոբեան:

Հազիւ քանի մ'օրէ ի վեր կազմուած՝ Միութիւնը Զատիկի առթիւ 10 աղքատ մանուկներ կը հագուեցնէ եւ Հայ զինուորներուն կողիկ սեղան մը կը սարքէ:

Միութիւնս 3 Միացեալ թաղերու — Առնաւուտգիւղ, Քուրուչէշմէ, Պեպէֆ — Ընկերութիւն մըն է: Ունեցած է իր Կանոնադրը, զոր 1914 Յունիսին Պատրիարքարան զրկած էր՝ վաւերացուելու համար¹⁹:

3. ՀԱՅԱՆՈՒԵՐ ՄԻՈՒԹԻՒՆ (1918)

Երեք Միացեալ թաղերու «Հայանուէր Միութիւն»ը 1918ին կազմուած կ'երեւայ: Ինչպէս միւս թաղերը՝ նոյնպէս հոս փափագ կը յայտնուի հայ որբերու համար Որբանոց կը բանալ: Միութիւնը զուլի կ'անցնի այս մը բանալ: Միութիւնը 1918 Դեկտ. 25ին ազգօգուտ ձեռնարկին եւ 1918 Դեկտ. 25ին կը բացուի Որբանոցը²⁰: Որբանոցի Հոգակար թաղերը կը ստանան «Հայանուէր Միութեան» Գործ. ժողովը, իրեն օժանդակ ունենալով Տիկիանց կ'անձաւորութիւն մը, հետեւեալ կազմով. Տիկիներ՝ Պարգե Յակոբեան, Արշալոյս Պոյաֆեան, Կ. Հալաֆեան, Զարուի Արապեան: Նիթապէս եւ բարոյապէս աջակցած են մասնաւորապէս հետեւեալները. Լեւոն Զիվեր Պէյ Կարապետեան, Խաչիկ Թարագեան, Կարապետ պետեան, Խաչիկ Թարագեան, Համ-Հալաֆեան, Կոպեռնիկ Գավաֆեան, Համ-Հալաֆեան, Քարապետ Յակոբեան, Յովհ. Փափագեան, Պարթե Յակոբեան, Սեփոն Սիրուն եւ Ա. Քիրքեան²¹:

Միութեան Ատենապետն էր Թ. Տ. Սահակեան, Ատենազպիւրը՝ Կարապետ Ալշըֆեան, Հաշուակալը՝ Գաբրիէլ Յ. Համբարձումեան²²:

1919 Յունուար 18ին Մոնս. Դոլլիի պատուարած որբերէն 50ը կը յանձնուի «Հա-

¹⁸ Ժամանակ, Կ. Պ., Թ. 1770:
¹⁹ Անդ, Թ. 1832:
²⁰ Պատմական Յիշատակարան Երեւանի Ս. Խաչ Եկեղեցւոյ Գուրուչէշմէի, Կ. Պ. 1932, էջ 88:
²¹ Անդ, էջ 89:
²² Անդ, էջ 89—90:

¹⁶ Թէպիկ, Ատեն. Տ. 1921, էջ 308:
¹⁷ Կ. Պ. 1908, Թ. 110, 112:

յանուէր Միութեան» Որբանոցին²³: Միութեանը Որբանոցին ի նպաստ պարահանդէս մը կու տայ 1919 Փետրուարին՝ մասնակցութեամբ Ֆրանսայի զինուորական արուեստագէտներու²⁴:

Որբանոցի պաշտօնական բացումը տեղի կ'ունենայ 1919 Մարտ 16ին Չաւէն Պատրիարքի եւ բազմաթիւ հիւրերու ներկայութեամբ, ուր կ'ըլլան ճառարարութիւններ, արտասանութիւններ ու երգեր: Կը խօսի նաեւ յոյն քահանայ մը: Կը շնորհակալուի Ամերիկայի ըրած նպաստները: Կ'ըլլայ 1000 ոսկիի նուիրատուութիւն²⁵:

Որբանոցը ունեցած է 85 մանչ եւ 150 աղջիկ սաներ: Կանոնաւոր Մանկապարտէզ եւ՝ Նախակրթարան՝ երեք դասարանով ու արհեստական բաժինով²⁶:

Եռանդով սկսուած գործը կը շարունակէ Միութեանը նաեւ 1920ին²⁷ եւ 1921ին²⁸, մերթ ունենալով թուրքական պահեր կամ նիւթական դժուարութիւններ²⁹:

4. ՀԱՅ ՍԱՆՈՒՀԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (1918)

Պէտք է — Առնաւուտգիւղ Ամերիկեան «Կոստանդինուպոլ Կոլէճ»ի նախկին հայ սանահինները 1918ին կազմած են «Հայ Սանուհիներու Միութիւն»ը: Հիմնադիրներն ու վարչականներն են. Նախագահ՝ Տիկ. Բարսեղեան, Անդամք՝ Օր. Զարուհի Արեւեան, Արսիկէ Սելեան, Արաֆի Թերզեան, Սաքեմիկ Նահապետեան, Երջանիկ Իսկէնտէրեան, Նուարդ Համբիկեան, Յուսիկ Թարագեան³⁰:

Միութեան նպատակն է. կապ պահել ամերիկեան եւ անգղիական շրջանակներու հետ եւ պատուաւորապէս ծանօթացնել Հայ Ազգը իր ամէն կողմերով³¹: Իր սարքած նուագահանդէսին կ'երգէ Մոսկուայի եւ Պետերբուրգի առաջին տները՝ Ղուկասեան:

Միութեանը 1921 Ապրիլին կը ներկայացնէ Գ. Չուբարի «Սանդուխտ Կոյս»ը: Մեհրաբեանի ղեկավարութեամբ կ'երգէ հայկական երգեր³²:

²³ Ժամանակ, 1919, թ. 3431:
²⁴ Անդ, թ. 3453—3454:
²⁵ Անդ, թ. 3471:
²⁶ Պատմական Յիշատակարան, անդ, էջ 90:
²⁷ Ժողովուրդի Չայմը, Կ. Պ., 1921, թ. 625:
²⁸ Անդ, թ. 789:
²⁹ Անդ, թ. 847, 852:
³⁰ Ժամանակ, 1918, թ. 3364:
³¹ Անդ, 1919, թ. 3622:
³² Ժողովուրդի Չայմը, 1921, թ. 768:

5. «ՀԱՅ ՕՐԻՈՐԳԱՅ ՃԵՄԱՐԱՆ»Ի ՆԱԽԿԻՆ ՍԱՆՈՒՀԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (1920)

Կը յիշուի Թէոդիկի քով³³. հաւանօրէն 1920ին կազմուած:

ՌՈՒՄԵԼԻ-ՀԻՍԱՐ

1. ՄԵՍՐՈՎՊԵՏԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1864)

Ռումէլի-Հիսարի հնագոյն Ընկերութիւնը կը կոչուի «Մեսրովպեան Ընկերութիւն», որ հիմնուած է 1864 Փետր.ին: Իր սկզբնական նպատակն եղած կը թուի չափահասներու, յատկապէս արհեստաւորներու ձրի ուսում տալ: Ընկերութիւնը Ռ. Հիսարի մէջ յատուկ սենեակ մը վարձելով՝ երեկոյեան դասընթացք մը հաստատած էր 1864 Յուլիսին, ազատ արհեստաւորներու համար, ուր կ'ուսուցուէր. Հայերէն, քուրաբանութիւն, աշխարհագրութիւն եւ գաղղիերէն³⁴:

1881ին Ընկերութեան նպատակն է. «Թաղին ազատիկ վարժարանին օժանդակել³⁵»: Իր Գործ. Ժողովի Ատենապետն է Ս. Կ. Արսէնեան, իսկ Ատենապետը՝ Գ. Գ. Սիմֆէշեան³⁶: Թերմիմանը Էֆեարի³⁷ մէջ եղած ծանուցումէ մը կ'իմանանք թէ Ռ. Հիսարի Ս. Թաղէտեան վարժարանի Հոգաբարձութիւնը, 1881ին, Մեսրովպեան Ընկերութեան յանձնուած է: Ծնորհիւ Ընկերութեան օժանդակութեան եւ Ռոբերտ Կոլէնի Հայ Ուսանողներու անձնուէր դասատուութեան՝ Ռ. Հիսարի վարժարանը լաւ վիճակ մ'ունի 1881ին³⁸:

2. ՕԺԱՆԿԱԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1869)

1869 Ապրիլ 3ին հրդեհ մը մեծ վնաս կը հասցնէ Ռումէլի-Հիսարի Հայոց: Դժբախտ հրկիզեալները ի վիճակի չեն շարունակելու թաղին Ս. Թաղէտեան վարժարանի ընթացքը: Հրկիզեալներու երկսեռ զաւակները կը մնան փողոցը: Հայ ոսկերիչ «քանի մը բարերար անձինք» դարձան տանելու համար աղետալներու զաւակներուն կըթութեան՝ 1869 Ապրիլ-Մայիսին կը կազմեն «Օժանդակ Ընկերութիւն»ը եւ երեքական զրուշնոց տոմսակներ տպել տալով՝ ազգայիններուն նիւ-

³³ Ամէն, Տարեց. 1921, էջ 308:
³⁴ Ժամանակ, Կ. Պ., 1864, էջ 120: Հմմտ. Մասիս, 1864, թ. 654:
³⁵ Մասիս, 1881, թ. 2944:
³⁶ Անդ:
³⁷ Կ. Պ., 1882, թ. 1457:
³⁸ Մասիս, 1881, թ. 3067:

թական օգնութեան կը դիմեն: «Այսպիսի մարդասիրական գործի մը նպաստելու համար մեր պատուական ազգայնոց յորդոր կարգալին աւելորդ կը համարինք», կը գրէ Մասիսի խմբագիր Իւթիւճեան³⁹:

Մամուլ⁴⁰ 1869 Օգոստ.ին կը տեղեկագրէ. «Րումէլի Հիսարի Թաղէտեան վարժարանին համար Օժանդակ անուամբ Ընկերութիւն մը կազմուեցաւ, որ կը բաղկանայ առ այժմ 25 ընկերներէ, որոնց կրնան անդամակցել ամէն ազգայինը տարին վճարելով մէկ բաժնի համար կէս օսմ. ոսկի...: Այս Ընկերութեան կողմանէ հետեւեալ չորս մեծ. անձինք Հոգաբարձու ընտրուած են.

- Յարութիւն Խանճեան
- Պողոս Էլմասեան
- Սիմոն Յովհաննէսեան
- Յարութիւն Մըմըրեան

Ասոնց պաշտօնն է Ընկերութեան հասոյթները ընդունիլ եւ դպրոցին մատակարարութիւնը ընել:

1869 Սեպտ. 1ին Ս. Թաղէտեան վարժարանի վարչութիւնը թաղականութեան կողմէ Օժանդակ Ընկերութեան կը յանձնուի: Ահաւասիկ Ընկերութեան Մուտքն ու ելքը 1869 Սեպտ. 1էն մինչեւ 1870 Յունիս.

Մուտք	դ. փր.
Շրջազայած զանձանակէն	7058 10
Եկեղեցւոյ թապախէն	462 20
Տղայոց ամսական հասոյթէն	2946 30
Ննջեցեալէ հասոյթք	47 20
Այլ եւ այլ նուէրներէ	803 20
Ընկերաց կէս ոսկի տարեկան բաժիններէ	517 20
Ստակի շահ	28 10
	11864 10
Ելք	
Ամսական դասատուաց	դ. փր. 8262 10
Վարժուհի տան ամսական	280
Դպրոցի նորոգութիւն	713
Դպրոցի անուխ եւ փայտ	457 30
Դպրոցի այլ եւ այլ ծախքեր	741 30
Դպրոցի 10 աղքատ տղայոց զգեստ	1341
Գանձանակ պտտցնողի քով	40
Պատրաստ գրած	18
	11864 10

³⁹ Մասիս, 1869, թ. 920: — Հմմտ. Փնջիկ, 1869, թ. 339:
⁴⁰ Կ. Պ., 1869, էջ 266:

Գանձապետ Օժանդակ Ընկերութեան Պողոս Էլմասեան

Վասն ճշդութեան հաշույս կը ստորագրեմք Ատենապետ Ստենապետ Ռ. Խ.⁴¹ Ծորագումեան⁴², խօսելով Ռ. Հիսարի վրայ, առանց որեւէ անուն յիշելու, կը գրէ. «Դպրոցին օգնութեան համար Ընկերութիւններ հաստատուած են հոգ երբեմն»:

Ընկերութիւնս անձանօթ է նաեւ Ալպոյաճեանի:

3. ՍԱՆԿԵՏԵՏԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1869)

Ընկերութեան հիմնարկութիւնը եղած ըլլալու է 1869ի ամառը: 1870 Օգոստոսին Օրագիր⁴³ կը հրատարակէ ճառ մը Ռ. Հիսարի աղջկանց վարժարանի աշակերտուհի վերգին Թորգոմեանէ գրուած, զոր կարդացած է նա «Հիսարու Սանդխտեան Ընկերութեան ՏԱՐԵԿԱՐԳԻՆ առթիւ» սարքուած հանդէսին:

Փունջ Օրաքերթի խմբագիրը 1870 Յունիս 4ին կը գրէ. «Երէկ ուրախութեամբ լսեցիք թէ տեղւոյն (Ռ. Հիսարի) Տիկնայֆ միարանելով Ընկերութիւն մը կազմեր են, աղջկանց վարժարանին խնամքը իրենց վրայ առնելու եւ մանաւանդ անոր նիւթական պիտոյքը հանգանակութեամբ հոգալու համար⁴⁴:

Ասկէ կ'եզրակոչենք. Ռումէլի-Հիսարի հրկիզումին հետեւանքով նիւթական միջոցներէ զուրկ Ս. Թաղէտեան երկսեռ վարժարանի նպաստելու համար նախ Հայ ոսկերիչներ Օժանդակ Ընկերութիւնը կը հիմնեն 1869 Յունիս Օժանդակ Ընկերութեան Մուտքն ու ելքը 1869 Սեպտ. 1էն մինչեւ 1870 Յունիս.

4. ՀԱՅ-ՍԱՆՈՒՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1871)

Ռումէլի-Հիսարի Ամերիկեան «Ռոբերտ Կոլէճ»ի մէջ 1870ական տարիներուն 40 հայ ուսանողներ կային: Ասոնք 1871ին կը հիմնուան:

⁴¹ Մասիս, 1870, թ. 988:
⁴² Երեւ. Չէլչու, Բ., անդ, էջ 698:
⁴³ 1870, թ. 221, Օգոստ. 23:
⁴⁴ Փնջիկ, 1870, թ. 600:

նեն «Հայ-Սանուց Ընկերութիւն»ը, որ կը յիշուի 1872 չորս-ին Օրագիրէն, որուն բաժանորդ գրուած էր Ընկերութիւնը, 1 սոկի վճարելով⁴⁵: Ընկերութեան հիմնումի թուականը կը ճշդէ Ընկերութեան Վարչութիւնը 1879 Ապրիլ 26/8 թուական նամակի մը մէջ, ուղղուած Մասիսի, ուր կը յիշուի թէ ուրիշ տարի առաջ հիմնուած է իրենց Ընկերութիւնը եւ 1879 Ապրիլին իր ութերորդ տարուան մէջն է: Հետեւաբար հիմնուած իրր 1871ի գարնան:

Ընկերութեան նպատակը, մինչեւ 1879ի սկիզբը, եղած է. Ռուսերա Կոլէճի «Հայ աշակերտաց մտաւորական կարողութեան զարգացմանը նպաստել եւ նոցա լրագիր եւ գիրք հայրապետի»⁴⁶: Իսկ 1879ի սկիզբը Ընկերութեան նպատակը փոխուած է: Այս մասին Ընկերութեան անդամները կը գրեն. «Ներկայ (1879) տարուայ սկիզբը Ընկերութեան անդամներն նկատելով որ ամէն Հայ իւր ձեռքէն եկածին չափ նպաստ կը մատուցանէ Հայ մանկտին դաստիարակելու մեծ եւ կենսական գործին, իրենց նպատակն ընդարձակեցին, յորձէ հետէ Ընկերութիւնս իրեն նպատակ ընդունեց. կարելի եղածին չափ թէ՛ նիւթապէս եւ թէ՛ բարոյապէս օգնել Հայ մանկտայն դաստիարակութեանը»⁴⁷:

1881ին Ընկերութիւնը կը կոչուի նաեւ «Հայ Ուսանողաց Ընկերութիւն»⁴⁸:

«Հակառակ իրեն դէմ յարուցեալ բազմաթիւ խոչընդոտներու» Ընկերութիւնը կրցեր է յարատեւել 8 տարի: 1879ին գրամ կը հաւաքէ՝ բարենպաստակ Ընկերութեան մը միջոցաւ իր նպատակին գործածելու համար: Ատենապետն է՝ Յ. Ն. Մասիսեան, իսկ Ատենադպիրը՝ Ա. Ս. Մկրտան⁴⁹:

Իրրև օտար վարժարան յաճախող Հայ աղաք՝ Ռ. Կոլէճի Հայ ուսանողները գեղեցիկ Կանոն մուշէին. Մասնաւոր օրեր որոշեր էին մաքուր հայերէն խօսելու համար, ինչպէս որ նոյնը կ'ընէին դպրոցին մէջ՝ անդդիներէն եւ գաղղիներէն խօսելու համար⁵⁰: Ասկէ գտն Կոլէճի «յառաջադէմ Հայ աշակերտները շարքաքն երկու անգամ փոփոխակի Բումէլի-Հիսարի ազգ. աղբատիկ դպրոցն երթալով՝ ձրիաբար դասախօսու-

թիւն կ'ընեն եւ Ընկերութեան անձուկ վիճակին ներածին չափ մերթ ընդ մերթ դպրոցական պիտոյք ալ կը նուիրեն յիշեալ ազգային դպրոցի աշակերտաց»⁵¹:

Ընկերութիւնը երկար տարիներ պահեր է իր գոյութիւնը: Հաւանօրէն 1908ի Սահմանադրութենէն վերջն է որ սկսած է կոչուիլ «Հայ-Սանուց Միութիւն»: Միութիւնը 1921ին կը մտադրէ սօսել իր 50ամեակը⁵²: 50ամեակը փառաւոր կերպով սօսուած է 1922 Փետր.ին եւ այդ առթիւ հրատարակուած է հատոր մը՝ «Հանգրուան», որ կը բովանդակէ կենսադրականներ, լուսանկարներ, գրական բաժին, ճառեր, եւն: Դժբախտաբար տեսած չենք «Հանգրուան»ը, ինչպէս նաեւ Ընկերութեան հրատարակած «Միութիւն» անունով թերթը (խմորատի՞պ)⁵³:

5. ՀԱՅԿԵԱՆ ԽՈՒՄԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1872)

Կազմուած է 1872ին: Հիմնադիրներն են Ռուսերա Կոլէճի Հայ աշակերտները: Նպատակը՝ «գիւղին (Ր. Հիսար) աղբատիկ դպրոցին ապագայ յառաջադիմութեանը ըստ կարի օժանդակել, որուն համար Ընկերութիւնը տոմսակներ տպել տուաւ եւ ամէն կարգի ազգայնոց ձեռնտուութիւնը խնդրեց իր գեղեցիկ դիտաւորութիւնը առաջ տանելու համար եւ փոքր ի շատէ յաջողեցաւ իր այս ձեռնարկին մէջ»⁵⁴:

Ընկերութիւնը քաջալերուած եւ ամէն կողմէ նպաստներ ընդունած է առաջին տարին⁵⁵: Սակայն 1874ի սկիզբը արդէն քայքայուելու սկսած էր⁵⁶:

6. Ս. ԹԱԿԵՆՍԵԱՆ ՍԱՆՈՒՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1875)

1875 Յուլ. 31 թուականով Ընկերութեան Վարչութիւնը կ'ընէ հետեւեալ գեղոյցը՝ «Ր. Հիսարի Ս. Թաղէսեան Վարժարանի կը համարի իւր շնորհակալութիւնը պարտք ըստ յայտնելու այն Մեծ. անձանց, որք հաճեցան իւր մանկական փայլերը նուիրատուութեամբ քաջալերել... Ընկերութիւնս իւր նպատակին համեմատ այժմ գրանց մը հաստատուած է...: Նա որ շարքաքական մէկ

51 Մասիս, 1879, թ. 2307, 2376:
52 Ժողովուրդի Ձայնը, 1921, թ. 977:
53 Տե՛ս Ժողովուրդի Ձայնը, 1922, թ. 1174:
54 Մասիս, 1874, թ. 1488:
55 Անդ, 1872, թ. 1330:
56 Անդ, 1874, թ. 1488:

45 Օրագիր, 1872, թ. 818:
46 Մասիս, 1879, թ. 2312:
47 Անդ:
48 Հայրենիք, 1881, թ. 753:
49 Մասիս, անդ:
50 Մասիս, 1879, թ. 2307:

բաժնեգին երկու դրուշ կը վճարէ, Ընկերութեանս պաշտպան կը համարուի եւ իրաւունք կ'ունենայ նաեւ Ընդհ. Ժողովի ներկայ գրուելու... իսկ նա, որ շարքաքական 40 փարա կը վճարէ Ընկերութեանս՝ մասնակից կ'ըլլայ Թանգարանին գրքերը առանց վարձի կարդալու... ինչպէս մեր սիրաւը, նոյնպէս մեր կարողութիւնը տղայ հասակէն նուիրելով մեր դժբախտ ազգին՝ կը մնամք միշտ անձնուէր ի դիմաց Ս. Թաղէսեան Սանուց Ընկերութեան

Ատենադպիր Ատենապետ
Երուանդ Չափուշեան Տիգրան Գաղաղեան⁵⁷
Այնպէս կ'երեւայ որ Ընկերութիւնս կազմուած է 1875ի սկիզբը. հիմնադիրներն են Ս. Թաղէսեան վարժարանի Սաները, որոնք նպատակ ունեցած են Գրադարան-Թանգարան մը ունենալ՝ հասարակաց ընթերցումի համար. թէ՛ գրքեր եւ թէ՛ դրամական նուէրներ ստացած են⁵⁸:

7. ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹԻՒՆ (1908)

1908 Սեպտեմբերին «նորակազմ» է Ռ. Հիսարի «Արարատեան Ընկերակցութիւն»ը, որ կը պատրաստուի ներկայացնել Ս. Սանդուխտ կոյսը⁵⁹: Թեոդիկ⁶⁰ Ընկերութիւնս «Արարատ» երկսեռ Ընկերակցութիւն» կ'անուանէ եւ կ'ըսէ որ «Հիմնուած է 1908ին, վերակազմուած 1 Մայիս 1919ին: Նպատակ. Անդամաց միջեւ ընկերային կապ մը ստեղծելով՝ օգնել եւ օգտուիլ: — Անդամք 35. Վարչ. Խորհուրդ. Միքայէլ Ալմուխանեան (Ատենապետ), Հ. Գալփայեան, Վ. Սարիմեան, Ե. Միսեան, Գ. Կարապետեան, Հ. Պահեկեան, Յ. Շիրիկեան: — Մայր Հ. Պահեկեան, Յ. Շիրիկեան, Վ. Ե. Ե. Կալանիքեան, Զ. Ալմուխանեան»:

8. ՈՐԱՆՆԱՍ ՄԱՐՄԻՆ (1918)

Կազմուած է 1818 Դեկտ.ին հետեւեալ անձերէն. Մարտիկ Միսկեան (Ատենապետ), Միհրան ձեհիգեան (Ատենադպիր), Թագուր Թագուրեան (Գանձապետ), Սարգիս Կարապետեան, Սիմոն Զիլիկիքեան, Աւետիս Սրէնչեան, Վահրամ Զեյրեան, Պրոֆ. Կալանիքեան: Առաջին առթիւ Միութիւնը 90 սոկի կը հաւաքէ ամսական բաժա-

57 Օրագիր, 1875, թ. 1605:
58 Անդ:
59 Սուրբանդակ, 1908, թ. 81:
60 Ամէն. Տարեց. 1921, էջ 300—301:

նորդազրուեալու եւ 11 որր կը գետեղէ Շիւլի Որբանոցին մէջ⁶¹:

Միութիւնը քիչ յետոյ 5 որրեր ալ կ'աւելցնէ 11ին վրայ⁶²:

9. ԿԻՆԵՐՈՒ ՕԺԱՆԳԱԿ ՈՐԱՆՆԱՍ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Ռ. Հիսարի այրերու կազմած «Որբանոց Մարմին»ին իրրև Օժանդակ՝ 1919 Յունուարին կը կազմուի «Կիներու Օժանդակ Որբանոցում Միութիւն»ը, ունենալով հետեւեալ Վարչական կազմը. Տիգրանեան՝ Ծիածան Ա. Իսպիկեան (Ատենապետ), Զարուհի Պալչեհեան (Փոխ-Ատենապետ), Արմենուհի Թիւլիսիւզեան (Փոխ-Ատենապետ), Վերթին ձեհիգեան (Գանձապետ), Էփթիկ Ժամկոչեան, Արափսի Զեհեհեան, Մանուշակ Զամուրեան, Եւ Օրիորդներ՝ Սարեհիկ եւ Անժէլ Եւսէնիգեան (Անդամներ)⁶³:

Օժանդակ Միութիւնը 1919 Փետրուարին յանձն կ'առնէ 2 որրերու ծախքը Հայթայթի:

ՊՈՅԱՃԻԳԻՒԿ

1. ԱՆՉԱՆՈՒԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1870)

Ղալաթիոյ կենդանական «Անձնուէր» Ընկերութեան ճիւղ մը բացած է Պոլսանի գիւղի Հայութիւնը 1870ին՝ «տեղւոյն վարժարանին նիւթական պէտքերը մատակարարելու» համար: Ի նպաստ վարժարանին «Տիգրան» անունով թատերախաղ մը կը ներկայացնէ Ընկերութիւնը 1870 Օգոստոսին⁶⁴:

2. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879)

Պոլսանի գիւղի Ուսումնասիրաց Ընկերութիւնը հիմնուած է 1879ի սկիզբը: Հիմնադիրն է նոյն Գիւղի երիտասարդութիւնը, որ ներքին համար միակ դարձանը կը համարի ներքին համար միակ դարձանը կը համարի կազմել Մշակութային Ընկերութիւն մը: Ընկերութեան Կանոնադիրը կ'ըսէ⁶⁵. «Գիւղիս երիտասարդութիւնը տեսնելով դպրոցիս ցաւալի վիճակը, որ պատիւ չէր բերեր գիւղացւոց, ջանաց միութեամբ դարման տանիլ այդմ

61 Ժամանակ, 1919, թ. 340:
62 Ժամանակ, անդ, թ. 344:
63 Անդ:
64 Մամուլ, Կ. Պ. 1870, էջ 824: — Հմմտ. Մանգ. էֆ. 1870, թ. 1362:
65 Ուսումնասիրաց Ընկերութիւն Պոլսանի Գիւղի, Կ. Պ. 1880, էջ 7:

